Նա այն կոչում է ուղղորդություն
և գթասրտություն.

فَقَدْ جَاءَكُمْ بِئْنَةً مِنْ رَبِّكُمْ وَهُدًى وَرَحْمَةً

"Այսպիսով, այժմ քեզ եկել է
ակնհայտ ապացույց ([Ղուրան](#)) քո
Տիրոջից և ուղղորդություն և
գթասրտություն:" [\[194\]](#)

Նա հետևյալ կերպ նկարագրում է
այն ինչպես բարեպաշտության
ուղղորդություն.

إِنَّ هَذَا الْقُرْآنَ يَهْدِي لِلّٰتِي هِيَ أَفْوَمُ وَيُبَشِّرُ
الْمُؤْمِنِينَ الَّذِينَ يَعْمَلُونَ الصَّالِحَاتِ أَنَّ لَهُمْ أَجْرًا
كَبِيرًا

"Իրոք, այս Ղուրանը ուղղորդում
է այն բանին, ինչը հանդիսանում է
առավել արդար և ճիշտ: "[195]

Ղուրանը մարդկությունը
ուղղորդում է դեպի կյանքի բոլոր
ասպարեզների առավել առաքինի
ուղի:

Յուրաքանչյուրը, ով
անդրադառնում է Ղուրանի
հայտնությանը և ներկայացմանը,
տալիս է գրքի իր գնահատականը
և մաքրազատում է իր
մտադրությունը միայն Ալլահի

համար: Ամենաբարձրյալ Ալլան
ասաց.

وَإِنَّهُ لَتَنْزِيلُ رَبِّ الْعَالَمِينَ * نَزَّلَ بِهِ الرُّوحُ
الْأَمِينُ * عَلَىٰ قَلْبِكَ لِتَكُونَ مِنَ الْمُنذِرِينَ

"Եվ իրոք, այս Ղուրանը
հանդիսանում է Տիրոջ
Հայտնությունը Ալլամինին
(մարդկությանը, ջինին և ամեն
գոյությանը), Որը ճշմարիտ Ռուհը
(Զիբրիհիլը, Գաբրիելը) իջեցրել է
քո սիրտը (օվ Մուհամմեդ
Խ.Ա.Ռ.Ն), որպեսզի դու լինես
հաղթողներից մեկը: "[196]

Այսպիսով Նա, Ով հայտնում է
Ղուրանը հանդիսանում է Ալլահը,
աշխարհների Տերը, իսկ մեկը, Ով
բերել է այն - ճշմարիտ Ոգի

Գաբրիելը և մեկը, ում սրտում
հայտնվել է այն, համդիսանում է
Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն):

Ղուրանը Մուհամմեդի հավերժ մի
հրաշքն է: Այն ներառում է
նշաններ, **որոնք պետք է տեղի**
ունենան մինչ Հարության Օրը:
Նախորդ Առաքյալների նշանները
և հրաշքները ավարտվել են
Առաքյալի կյանքի հետ միասին,
սակայն Ալլահը Ղուրանը դարձրել
է հավերժ ապացույց:

Այն հանդիսանում է ծավալուն
ապացույց և ապշեցնող մի նշան:
Ալլահը մարտահրավեր է նետում
մարդկությանը, որպեսզի նրանք
ներկայացնեն նմանատիպ մի բան

կամ մեկ սուրա, սակայն նրանք ի
վիճակի չեն իրազործել այն
անկախ փաստի, որ կարելի է
կազմել տառերից և բառերից, իսկ
մարդիկ ովքեր ստացել եին
առաջին հայտնությունը,
հանդիսանում էին հոեսորներ և
պերճախոսներ: Ալլահն ասաց.

أَمْ يَقُولُونَ افْتَرَاهُ قُلْ فَأَنْوَا بِسُورَةٍ مِثْلِهِ وَادْعُوا مَنِ
اسْتَطَعْتُمْ مِنْ دُونِ اللَّهِ إِنْ كُنْتُمْ صَادِقِينَ

""Կամ արդյոք նրանք ասում են,
թե "Նա (**Մուհամմեդը Խ.Ա.Ո.Ն**)
կեղծել է այն:" Ասա. " Այդ
դեպքում բերեք նմանատիպ մի
Սուրա, գլուխ և բացի Ալլահից
կոչեք նրան, ում ցանկանում եք,
եթե դուք ճշմարիտ եք:""**[197]**

Ղուրանի հայտնության փաստի
վկայություն է հանդիսանում այն
փաստը, որ այն ներառում է
նախորդ ժողովուրդների
պատմությունները,
մարզարեացնում է ապագա
իրադարձությունները, որոնք
պետք է տեղի ունենան, քանի որ
այն մարզարեցարել և նշել է
բազմաթիվ գիտական փաստեր,
**որոնք հայտնաբերվել են միայն
վերջերս:** Նրա

Աստվածայնության և
հայտնության մեկ այլ ապացույց է
հանդիսանում այն, որ
Մարզարեն, ում հայտնվել է,
անտեղյակ էր **Ղուրանին և**
նմանատիպ տարբերակին:
Ալլահն ասաց.

قُلْ لَوْ شَاءَ اللَّهُ مَا تَلَوْتُهُ عَلَيْكُمْ وَلَا أَدْرِكُمْ بِهِ فَقَدْ
لَبِثْتُ فِيهِمْ عُمْرًا مِنْ قَبْلِهِ أَفَلَا تَعْقِلُونَ

""Ասա օվ Մուհամմեդ (Խ.Ա.Ո.Ն)

"Եթե չիներ Ալլահի
ցանկությունը, ես այն չեի
ընթերցի ձեզ, կամ այն չեր
հայտնվի ձեզ: Իրոք, ես մինչ այդ,
իմ կյանքի ընթացքում ձեր մեջ էի:
Արդյո՞ք դուք չեք նկատում:""[198]

Նա անուսում մի անհատ էր, **ով**
չեր կարող գրել կամ կարդալ: Նաև
նա չեր կարող այցելել որևէ Շեյխի
կամ մարդու, **ով կարող է**
ներկայացնել Ղուրանին
համապատասխան որևէ մի բան:
Ալլահն ասաց.

وَمَا كُنْتَ تَتْلُو مِنْ قَبْلِهِ مِنْ كِتَابٍ وَلَا تَخْطُطْهُ
بِيَمِينِكَ إِذَا لَازَّتَابَ الْمُبْطَلُونَ

"Դու (օվ Մուհամմեդ Խ.Ա.Ո.Ն) ոչ
ընթերցել ես նմանատիպ որևէ
գիրք (Ղուրան) մինչ այդ, ոչ Էլ գրել
ես որևէ գիրք քո աջ ձեռքով: Այդ
դեպքում, իրոք, կեղծիքի
հետևողները պետք է
կասկածեն: "[\[199\]](#)

Այս անուսում մարդուն, ում
նկարագրել էին Թորան և
Ավետարանը, որ նա չի կարող ոչ
գրել ոչ Էլ կարդալ, այցելեցին
Հրեա և Քրիստոնյա
հոգևորականները, ովքեր ունեին
Թորայի և Ավետարանի
հիշատակությունը, ովքեր

հարցրեցին այն խնդիրների
մասին, որոնց շուրջ
տարակարծիք էին և պետք է
միջնորդություն խնդրեին, [որոնք](#)
[պնդում էին:](#) Թորայի և
Ավետարանի մեջ բացատրելով
Մուհամմեդի ([Խ.Ա.Ո.Ը](#))
նկարագրությունը Ալլահն ասաց.

الَّذِينَ يَتَّبِعُونَ الرَّسُولَ النَّبِيَّ الْأَمِيَّ الَّذِي يَجْدُونَهُ
مَكْتُوبًا عِنْدَهُمْ فِي التَّوْرَاهِ وَالْإِنْجِيلِ يَأْمُرُهُمْ
بِالْمَعْرُوفِ وَيَنْهَاهُمْ عَنِ الْمُنْكَرِ وَيُحِلُّ لَهُمْ
الطَّيِّبَاتِ وَيُحِرِّمُ عَلَيْهِمُ الْخَبَابَاتِ وَيَضْعُ عَنْهُمْ
إِصْرَهُمْ وَالْأَغْلَالَ الَّتِي كَانَتْ عَلَيْهِمْ فَالَّذِينَ آمَنُوا
بِهِ وَعَزَّرُوهُ وَنَصَرُوهُ وَاتَّبَعُوا النُّورَ الَّذِي أُنْزِلَ
مَعَهُ أَوْلَئِكَ هُمُ الْمُفْلِحُونَ

Նրանք, ովքեր հետևում են
Մարզարեին, Առաքյալին, ով ոչ

կարող էր կարդալ, ոչ զրել
 (այսինքն Մուհամմեդին
Խ.Ա.Ո.Ն) ում մասին նրանք
 տեսել են Թառլաթի (**Թորայի**)
 (Երկրորդ Օրենք xviii 15) և
 Ինջիլի (Ավետարանի) մեջ
 (Հովհաննես xiv 16) – նրանց
 պատվիրեց Ալ-Մարուֆ (այսինքն
 Իսլամական Միաստվածություն
 և այն ամենը, ինչ պատվիրել է
 Իսլամը) և արգելեց Ալ-
 Մունքարը (այսինքն
 անհավատությունը, ցանկացած
 տեսակի բազմաստվածությունը և
 այն ամենը ինչ արգելում է
 Իսլամը), նա թույլատրում է Աք-
 Թայիբաթ (այսինքն ամեն բարիքը
 և թույլատրելին, որը
 վերաբերվում է արարքներին,

առարկաներին, հավատքներին,
անհատներին և սնունդին) և
արգելում է անթույլատրելի Ալ-
Քաբայթ (այսինքն ամեն չարիքը և
անթույլատրելին, որը
վերաբերվում է առարկաներին,
արարքներին, հավատքներին,
անհատներին, սնունդին):"[\[200\]](#)

Ալլահը ասում է այն հարցերի
մասին, որոնք հրեաները և
քրիստոնյաները ուղղեցին
Մարզարեին (**Խ.Ա.Ո.Ե.**).

يَسْأَلُكَ أَهْلُ الْكِتَابِ أَنْ تُنَزِّلَ عَلَيْهِمْ كِتَابًا مِنْ
السَّمَاءِ فَقَدْ سَأَلُوا مُوسَى أَكْبَرَ مِنْ ذَلِكَ فَقَالُوا أَرْنَا
اللَّهَ جَهْرًا فَأَخَذَتْهُمُ الصَّاعِقةُ بِظُلْمٍ مِنْهُمْ ثُمَّ اتَّخَذُوا
الْعِجْلَ مِنْ بَعْدِ مَا جَاءَتْهُمُ الْبَيِّنَاتُ فَعَفَوْنَا عَنْ ذَلِكَ
وَآتَيْنَا مُوسَى سُلْطَانًا مُبِينًا

"Գրի Մարդիկ քեզ խնդրեցին
իրենց մի զիրք տալ, որը իշել է
նրանց երկնքից:"[201]

وَيَسْأَلُونَكَ عَنِ الرُّوحِ قُلِ الرُّوحُ مِنْ أَمْرِ رَبِّي
وَمَا أُوتِيتُمْ مِنَ الْعِلْمِ إِلَّا قَلِيلاً

"Եվ նրանք հարցրեցին քեզ (օվ
Մուլհամմեդ Խ.Ա.Ռ.Ն) կապված
Ռուհի (Հոգու) հետ:"[202]

وَيَسْأَلُونَكَ عَنْ ذِي الْقَرْنَيْنِ قُلْ سَأَتْلُو عَلَيْكُمْ مِنْهُ
ذِكْرًا

"Եվ նրանք հարցրեցին քեզ Դիուլ
Քարնայնի մասին:"[203]

إِنَّ هَذَا الْقُرْآنَ يَقُصُّ عَلَىٰ بَنِي إِسْرَائِيلَ أَكْثَرَ الَّذِي
هُمْ فِيهِ يَخْتَلِفُونَ

"Ի՞ռոք, այս Ղուրանը հաղորդում է
Խսրայելի Զավակներին այն
մեծամասնությունը, որի մեջ
նրանք տարածայնության մեջ
են: "[\[204\]](#)

Պատվելի Աբրահամ Ֆիլիփսը, մի
ձախողակ փորձ ունեցավ, իր
դոկտորական թեզի մեջ, [Երբ թերագնահատեց Ղուրանը:](#) Ի
հակառակ, Ղուրանը նրան
ողողեց ապացույցներով,
[Վկայություններով և նշաններով:](#)
Տղամարդը հայտարարեց իր իսկ
թուլությունը, [հնագանդվեց իր Արարչին և ընդունեց Իսլամ:](#) [\[205\]](#)

Երբ մահմեդականներից մեկը
Ամերիկացի քժիշկ Զեֆրի Լանգին

նվիրեց Փառահեղ Ղուրանի
իմաստային թարգմանության
կրկնօրինակը, նա գտավ որ այս
Ղուրանը դիմում է նրան,
պատասխանում նրա հարցերին և
հերացնում է նրա և Հոգու միջև
առկա անջրպետը: Նա ասաց.
"Թվում է, թե Նա, Ով հայտնել է
Ղուրանը ճանաչում է ինձ ավելին,
քան ես ինքս: "[206]

Այս, Նա, Ով հայտնել է Ղուրանը
հանդիսանում է մարդու Արարիչը
և Նա Ալլահն է, փառք լինի Նրան:
Նա ասաց.

أَلَا يَعْلَمُ مَنْ خَلَقَ وَهُوَ اللَّطِيفُ الْخَيِّرُ

"Արդյո՞ք Նա, Ով արարել է,
տեղյակ է: Եվ Նա հանդիսանում է

առավել Բարին և Բարեկիրթը (Իր ստրուկների նկատմամբ) Ամենից Տեղյակը (ամենի):"[\[207\]](#)

Այսպիսով, Փառահեղ Ղուրանի մեկնաբանության թարգմանությունը նրան ուղղորդեց առ Խսլամ և մի գոքի գրառման, որտեղից էլ ես մեջ եմ քերում:

Ղուրանը համապարփակ է մարդու բոլոր կարիքներին: Այն իր մեջ ներառում է հավատքի, օրենքի, [մարդկային](#) հարաբերությունների և վարչելածնի բոլոր հիմքերը: Ալլահն ասաց.

مَا فَرَّطَنَا فِي الْكِتَابِ مِنْ شَيْءٍ

"Մենք ոչինչ չենք անտեսել Գործի
մեջ:"[\[208\]](#)

Ղուրանի մեջ առկա է Ալլահի
Եզակիության հավատքի կոչը,
որտեղ նշվում է Նրա Անունները,
Ածականները և արարքները: Այն
կոչ է անում հավատք ընծայել
Մարգարենների և Առաքյալների
վավերականությանը: Նաև
հաստատում է Հարությունը,
պարզեցնելով, **հաշիվը և նրանց
վկայությունները և
ապացույցները:** Այն հաղորդում է
նախորդ ժողովուրդների
պատմությունները, այս աշխարհի
նրանց պատիժը, ինչպես նաև այն
տանջանքը, **որը նրանց սպասում
է հետագա կյանքում:**

Այն իր մեջ ներառում է բազմաթիվ
ապացույցներ և նշաններ, որոնք
շփոթել են գիտնականներին և
որոնք համապատասխանում են
բոլոր սերունդներին և տարիքին
և որտեղ բազմաթիվ
գիտնականներ և հետազոտողներ
կարող են գտնել այն, **ինչ**
փնտրում են: Ես կներկայացնեմ
այդ փաստերից մի քանիսը
հայտնող երեք օրինակ:

1. Նրա խոսքերը.

وَهُوَ الَّذِي مَرَجَ الْبَحْرَيْنِ هَذَا عَذْبُ فُرَاتٍ وَهَذَا
مِلْحُ أَجَاجٌ وَجَعَلَ بَيْنَهُمَا بَرْزَخًا وَجِرَّا مَخْجُورًا

"Եվ այդ Նա է, Ով զատել է
ծովերը, մեկը համեղ և քաղցր,
իսկ մյուսը աղի և դառը և նրանց

Միջև Նա սահմանել է կատարյալ
միջնորմ և խոչընդոտ: "[209]"

Նաև Նա ասաց.

أَوْ كَظُلْمَاتٍ فِي بَحْرٍ لُجْيٍ يَغْشَاهُ مَوْجٌ مِنْ فَوْقِهِ
مَوْجٌ مِنْ فَوْقِهِ سَحَابٌ ظُلْمَاتٌ بَعْضُهَا فَوْقَ بَعْضٍ
إِذَا أَخْرَجَ يَدَهُ لَمْ يَكُنْ يَرَاهَا وَمَنْ لَمْ يَجْعَلِ اللَّهُ لَهُ
نُورًا فَمَا لَهُ مِنْ نُورٍ

"Իսկ անհավատների իրավիճակը
նման է խորը ծովի խավարի, որը
լցված է ալիքներով, որոնք
բեռնված են միմյանց վրա գտնվող
ալիքների մուգ ամպերով,
խավարի շերտերը միմյանց վրա,
եթե մարդը ձգի իր ձեռքը, **նա**
հազիվ կարող է տեսնել այն: Եվ,
նա, ում համար Ալլահը չի նշել

լույսը, քանի որ նրա համար առկա
չէ որևէ լույս: "[210]"

Քաջ հայտնի է, որ Մուհամմեդը
(Խ.Ա.Ո.Ն) երբեք ծովով չի
ճանապարհորդել, ոչ ել այդ
ժամանակաշրջանում առկա էին
նյութական գործիքներ, որոնք
կարող էին օգնել հետազոտել
ծովի խորքերը: Ո՞վ եր կարող
Մուհամմեդին (Խ.Ա.Ո.Ն)
ներկայացնել այս տեղեկությունը,
եթե ոչ Ալլահը:

2. Ալլահն ասաց.

وَلَقَدْ خَلَقْنَا إِلَيْنَا مِنْ سُلَالَةٍ مِنْ طِينٍ * ثُمَّ
جَعَلْنَاهُ نُطْفَةً فِي قَرَارٍ مَكِينٍ * ثُمَّ خَلَقْنَا النُطْفَةَ
عَلَقَةً فَخَلَقْنَا الْعَلَقَةَ مُضْنَغَةً فَخَلَقْنَا الْمُضْنَغَةَ عِظَامًا

فَكَسَوْنَا الْعِظَامَ لَحْمًا ثُمَّ أَنْشَأْنَاهُ خَلْقًا آخَرَ فَتَبَارَكَ
اللَّهُ أَحْسَنُ الْخَالِقِينَ

"Եվ, իրոք, Մենք արարել ենք
մարդուն (**Աղամին**) կավից (**հողից**
և **ջրից**): Այնուհետ մենք դարձրել
ենք նրան (**Աղամի ժառանգներին**)
որպես Նութքահ (արական և
իզական սեռի սեռական
հարաբերության խառնուրդի
կաթիլներ) ապահով մի վայրում
(կնոջ արզանդում): Այնուհետ,
Մենք դարձրել ենք Նութքահը
թանձրուկ, (**թանձր արյան կտոր**),
այնուհետ Մենք դարձրել ենք
թանձրուկը մարմնի մի փոքր
գունդ, այնուհետ Մենք այդ փոքր
գնդից դարձրել ենք ոսկորներ,
այնուհետ Մենք **հազցրել ենք**

ուկորները մարմնով և այնուհետ
Մենք բերել ենք այն որպես մեկ
այլ արարած: Այսպիսով օրինյալ
լինի Ալլահը, Արարիչներից
Լավագույնը:"[211]

Միայն վերջերսն են
զիտնականները հայտնաբերել
սաղմնաբանության զարգացման
այս փուլերի մանրամասները:

3. Ալլահը նաև ասաց.

وَعِنْهُ مَفَاتِحُ الْغَيْبِ لَا يَعْلَمُهَا إِلَّا هُوَ وَيَعْلَمُ مَا فِي
الْبَرِّ وَالْبَحْرِ وَمَا تَسْقُطُ مِنْ وَرَقَةٍ إِلَّا يَعْلَمُهَا وَلَا
خَبَّةٌ فِي ظُلُمَاتِ الْأَرْضِ وَلَا رَطْبٌ وَلَا يَابِسٌ إِلَّا
فِي كِتَابٍ مُّبِينٍ

"Եվ Նրա հետ գտնվում են Ղայրի
(թաքնվածի) բանալիները, ոչ ոք

տեղյակ չէ դրանց մասին,
բացառությամբ Նրա: Եվ Նա
տեղյակ է այն ամենից, ինչը երկրի
և ծովի վրա է, **ոչ մի տերև ցած չի**
ընկնում առանց նրա գիտության:
Ոչ մի հատիկ երկրի խավարի մեջ
լինի թարմ, թե չոր, **բոլորը**
գրառված են Ակնհայտ
Արձանագրության մեջ:"[212]

Մարդկությունը չունի այս
համապարփակ գիտելիքը և
երբեք չի մտորել այս ամենի
մասին, **սակայն ունակ է**
իրազործել այն: Եթե
գիտնականների խումբը
հետազոտեն մի բույս կամ միջատ
և գրառեն իրենց գտածոները և
հայտնագործությունները, մենք

բոլորս կարող ենք շփոթվել
դրանից, չնայած մենք տեղյակ
ենք, որ այն ինչ թաքնված է
գիտնականներից այդ բույսի կամ
միջատի մեջ, ավելին է, **քան**
նրանք զտել են:

Ֆրանսիացի գիտնական Մորիս
Բուքեյլը համեմատություն է անց
կացրել Թորայի, Ավետարանի և
Ղուրանի և Ժամանակակից
գիտական
հայտնագործությունների միջև,
որոնք կապված են երկինքների,
երկրի արարման հետ, **որտեղ**
մարդը զտնում է որ այս
Ժամանակակից
հայտնագործությունները
համամիտ են Ղուրանի հետ:

Մյուս կողմից նա գտել է, որ այսօք
շրջանառության մեջ գտնվող
Թորան և Ավետարանը
բազմաթիվ սխալ
տեղեկություններ են ներառում
կապված երկինքների, երկրի,
մարդու և կենդանիների
արարման հետ:[\[213\]](#)

Բ. ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ՍՈՒՆՈՎ.

Ալլահը հայտնել է Ղուրանը
Մարգարեին, ինչպես նաև
այնպիսի մի բան, որը կոչվում է
Մարգարեական Սուննա, **որն էլ**
իր հերթին բացատրում է
Ղուրանը: Ալլահի Մարգարեն
(Խ.Ա.Ռ.Ն) ասաց. "Իրոք, ինձ տվել
են Ղուրանը և նմանատիպ մի

բան նրա հետ: "[214] Ալլահը
թույլատրել է նրան բացատրել
Ղուրանի ընդհանուր և
առանձնակի տարբերակները:
Ալլահն ասաց.

وَأَنْزَلْنَا إِلَيْكَ الْذِكْرَ لِتُبَيِّنَ لِلنَّاسِ مَا نُزِّلَ إِلَيْهِمْ
وَلَعَلَّهُمْ يَتَفَكَّرُونَ

"Եվ Մենք նաև ուղարկել ենք քեզ
(օվ Մուհամմեդ Խ.Ա.Ո.Ն) Դիքը
(հիշատակություն և խորհուրդ
այսինքն Ղուրան), որպեսզի դու
պարզորոշ բացատրես մարդկանց
այն ինչ նրանց ուղարկել ենք և որ
նրանք ի վիճակի լինեն
մտորել: "[215]

Սուննան հանդիսանում է Իսլամի
երկրորդ աղբյուրը: Այն

նշանակում է հաղորդել
Մարգարեի (Խ.Ա.Ո.Ն) խոսքերը,
արարքները, հաստատումները և
հատկանիշները, **որոնք**
հաղորդում են միմյանց հետ
կապված և վավերական
հաղորդողների շղթան: Այն
նույնպես հանդիսանում է Ալլահի
հայտնությունը Իր Մարգարե
Մուհամմեդին (Խ.Ա.Ո.Ն), քանի
որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) չի
խոսել իր իսկ ցանկությամբ:
Ալլահն ասաց.

وَمَا يُنْطِقُ عَنِ الْهَوَى * إِنْ هُوَ إِلَّا وَحْيٌ يُوحَى
* عَلَمَهُ شَدِيدُ الْفُقُوى

"Ոչ ել նա խոսել է իր իսկ
ցանկությամբ: Այն միայն

հայտնված Հայտնություն է: Նա
ուսուցանել է (այս Ղուրանը) հզոր
մի մեկի օգնությամբ (Ղիքրիիլի
Գաբրիելի):"[\[216\]](#)

Մարզարեն (Խ.Ա.Ո.Ն) միայն
փոխանցել է այն, ինչ նրան
պատվիրել են փոխանցել: Ալլահն
ասաց նրա մասին.

إِنْ أَتَّبَعُ إِلَّا مَا يُوْحَى إِلَيَّ وَمَا أَنَا إِلَّا نَذِيرٌ مُّبِينٌ

"Ես միայն հետևում են նրան, ինչ
հայտնվել է ինձ և ես ուղղակի մի
պարզ զգուշացում եմ:[\[217\]](#)

Անբիծ Սուննան հանդիսանում է
կանոնների, հակատքների,
երկրպագության
գործողությունների,

հարաբերությունների և
վարվելածնի տեսակների
գործնական իրականացումը, [որը](#)
[պատվիրում է խալամը:](#) Ալլահի
Մարգարեն ([Ի.Ա.Օ.Ն](#)), օրինակի է
վերածել այն, ինչ նրան պատվիրել
են, բացատրել է այդ մարդկանց և
պատվիրել կրկնել այն, [ինչը նա էր](#)
[իրականացնում:](#) Օրինակ նա
ասաց. "Աղոթեք այնպես, [ինչպես](#)
[ես եմ աղոթում:](#)"[\[218\]](#)

Ամենազոր Ալլահը
հավատացյալներին պատվիրեց
հետամուտ լինել նրան իր բոլոր
արարքների և խոսքերի մեջ,
որպեսզի նրանց [հավատքը](#)
[կատարյալ լինի:](#) Նա ասաց.

لَقَدْ كَانَ لَكُمْ فِي رَسُولِ اللَّهِ أَسْوَةٌ حَسَنَةٌ لِمَنْ كَانَ
يَرْجُو اللَّهَ وَالْيَوْمَ الْآخِرَ وَذَكَرَ اللَّهَ كَثِيرًا

"Իրոք, Ալլահի Մարգարեի
(Մուլհամմեդի Խ.Ա.Ղ.Ն) մեջ դուք
ունեք բարի օրինակ որպեսզի
հետևեք նրան, ով հույս ունի
(Հանդիպել) Ալլահին և Վերջին
Օրվան և շատ հիշատակում է
Ալլահին:" [\[219\]](#)

Մարգարեի առաքինի
ուղեկցորդները փոխանցել են
նրա խոսքերը և արարքները
նրանց, ովքեր հաջորդել են
նրանց, իսկ նրանք ել իրենց
հերթին իրենց հաջորդներին:
Այնուհետ դրանք գրառել են
Սուննայի Գրքերի մեջ: Սուննայի

փոխանցողները խիստ էին նրանց հետ, ումից, որ նրանք փոխանցում էին և ստեղծում էին այնպիսի իրավիճակներ, որոնք համապատասխանում էին նրանց, ումից որ նրանք հաղորդում էին Սուննան, մինչ փոխանցման շղթան կապվում էր անմիջապես Ալլահի Մարգարեի (**Խ.Ա.Ո.Ն**) հաղորդողի հետ: [\[220\]](#)

Իրավիճակը հասել էր այն աստիճանի, որ բոլոր մարդիկ ներառվում էին փոխանցման մեջ, որը պետք է լիներ ճշմարտացի, արդար, [անկեղծ](#):

Սուննան հանդես գալով որպես Խլամի զործնական իրականացում, նաև բացատրում

Էր Ղուրանը, մեկնաբանում և
տալիս էր տարբերակների
ընդհանուր իմաստները: Ալլահի
Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)

սովորություն ուներ իրազործել
այն, երբեմն իր խոկ խոսքերով,
երբեմն իր արարքներով և երբեմն
կիրառելով բոլոր միասին: Որոշ
դեպքերում Սուննան կարող էր
տալ որոշակի կանոնների և
օրենքների անկախ
բացատրությունը, որոնք առկա
չեն Ղուրանի մեջ:

Անհրաժեշտ է հավատք ընծայել,
որ Ղուրանը և Սուննան
հանդիսանում են Իսլամի
նախնական աղբյուրները, որոնց
պետք է հետևել: Անհրաժեշտ է

հետևել երկուսի պատվիրանին,
արգելքներին և հավատք ընծայել
նրանց բովանդակությանը:

Անհրաժեշտ է հավատք ընծայել
այնտեղ զետեղված Անուններին,
Ածականներին և Ալլահի
Գործերին, որոնք նա տվել է Իր
հավատացյալ ընկերներին և
որոնց միջոցով Նա սպառնում է
Իր անհավատ թշնամիներին: Նա
ասաց.

فَلَا وَرِبَّ لَكَ لَا يُؤْمِنُونَ حَتَّىٰ يُحَكِّمُوكَ فِيمَا شَجَرَ
بَيْنَهُمْ ثُمَّ لَا يَجِدُوا فِي أَنفُسِهِمْ حَرَجًا مِمَّا قَضَيْتَ
وَيُسَلِّمُوا تَسْلِيمًا

"Սակայն ոչ, ձեր Տիրոջ անունով,
նրանք չունեն Հավատք, մինչ
նրանք ստիպում են քեզ (օվ

Մուլհամմեդ Խ.Ա.Ո.Ն) դատել
բոլոր վեճերը նրանց միջև և ոչ մի
տրամաբանություն չգտնելով
ընդդեմ իրենց որոշումների և
ընդունել (**դրանք**) լիակատար
հնազանդությամբ:[\[221\]](#)

Նա նաև ասաց.

وَمَا آتَكُمُ الرَّسُولُ فَخُذُوهُ وَمَا نَهَاكُمْ عَنْهُ فَانْتَهُوا
وَاتَّقُوا اللَّهَ إِنَّ اللَّهَ شَدِيدُ الْعِقَابِ

"Եվ ինչ Մարգարեն (**Մուլհամմեդ**
Խ.Ա.Ո.Ն) տալիս է քեզ, վերցու և
ինչ նա արգելում քեզ, հեռացիր
(դրանից):[\[222\]](#)

Կրոնի աղբյուրների
ներածականից հետո, պատեհ է
քննարկել նրա աստիճանները.

Իսլամը, Իմանը և Իհսանը: Մենք հակիրճ կներկայացնենք նաև այս աստիճանների սյուները:

ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ [223]

Իսլամ. Այն բաղկացած է հինգ սյուներից. Վկայել, որ գոյություն չունի ոչ մի աստվածություն արժանի երկրպագության բացառությամբ Ալլահի և որ Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) հանդիսանում է Նրա Մարգարեն, ներկայացնել աղոթք, վճարել Զաքյաթ, պահը պահել
Ուամադան ամսվա ընթացքում և
Ուխտազնացություն:

Առաջին. Վկայել, որ գոյություն չունի ոչ մի աստվածություն

Երկրպագության արժանի,
բացառությամբ Ալլահի և որ
Մուհամմեդը (**Խ.Ա.Ո.Ն**)
հանդիսանում է Նրա մարզարեն:

Վկայության առաջին հատվածը
նշանակում է, որ գոյություն չունի
ոչ մի ճշմարիտ աստվածություն
Երկրում կամ Երկինքներում,
բացառությամբ միայն Նրա: Նա
հանդիսանում է միակ, **ճշմարիտ**
Աստվածը և մնացած այլ
աստվածները կեղծ են: [224] Նաև
այն նշանակում է մաքրել բոլոր
գործողությունները և Երկրպագել
միայն Ալլահին և հեռու մնալ այլ
աստվածներից: Այս
հայտարարության անհատը չի

կարող շահել առանց այս երկու
գործողությունների.

1.Ասել այն ելնելով հավատքից,
զիտելիքից, **համոզվածությունից**
և սիրուց:

2.Հավատք չընծայել այն ամենին,
որը ուղղորդում է երկրպագել այլ
աստվածներին: Նա, ով կրկնում է
այս հայտարարությունը և
հավատք չի ընծայում այն
ամենին, որին երկրպագում են
բացառությամբ Ալլահի, **այս**
հայտարարությունը օգտակար չի
լինի:[225]

Վկայել, որ Մուհամմեդը
(Խ.Ա.Ո.Ն)հանդիսանում է Ալլահի
Մարգարեն, նշանակում է հետևել

նրա բոլոր պատվիրաններին, նրա
տեղեկություններին, ձեռնպահ
մնալ ամեն արգելքներից և
զգուշացնել և երկրպագել Ալլահին
այնպես, **ինչպես նա է հրապարակել:** Անհրաժեշտ է նաև
իմանալ և մտապահել, որ
Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն.)
հանդիսանում է Ալլահի
մարգարեն ամբողջ մարդկության
համար, որ նա Ալլահի միակ
ստրուկն է, ուստի նրան չպետք է
երկրպագել, այլ հնազանդվել և
հետևել և որ նա, ով հետևում է
նրան, մտնում է Դրախտ և ով չի
հնազանդվում, **Կրակ:**
Անհրաժեշտ է նաև մտապահել,
որ հավատքի հետ կապված
Խսլամական

կարգադրությունները,
երկրպագության
գործողությունները, որոնք
պատվիրել է Ալլահը, օրենքի և
կանոնադրության համակարգը և
խնդիրները, ինչպես նաև
ընտանիք կազմելու, կամ
թույլատրելի ու անթույլատրելի
խնդիրները հնարավոր չեն
ընդունել առանց այս առաքինի
Մարգարեի (**Խ.Ա.Ո.Ն**),քանի որ
նա հանդիսանում է Ալլահի
Մարգարեն, **ով Նրա Օրենքը**
տարածեց մարդկությանը:[**\[226\]**](#)

ԵՐԿՈՒ.ԱՂՈՇՔ[**\[227\]**](#)

Աղոթքը հանդիսանում է իսլամի
երկրորդ սյունը: Այն անշուշտ

Իսլամի մի սյունն է, քանի որ
հանդիսանում է մարդու և իր
Տիրոջ կապը: Աղոթքը կրկնում են
օրական հինգ անգամ, ըստ որի
թարմեցվում է անհատի
հավատքը, **մաքրվում մեղքի**
հետքերը: Աղոթքը անջրապետ է
անհատի և մեղքերի միջև: Եթե
նա առավոտյան արթնանում է,
ապա մինչ աշխարհիկ
խնդիրներին առնչվելը անբիծ և
մաքուր կանգնում է իր **Տիրոջ**
առջև: Նա մեծարում է իր **Տիրոջը,**
հաստատում Նրա կատարյալ
իրավունքը երկրապագությամբ և
խոնարհությամբ, **կանգնելով և**
հակվելով օրական հինգ անգամ:

Մինչ իր աղոթք սկսելը, անհատը
պետք է մաքրի իր սիրտը,
մարմինը, **հազուսոր և աղոթքի
վայրը**: Մահմեդականը պետք է
աղոթքի միացյալ իր մյուս
եղբայրների հետ, եթե իհարկե
հեշտ է նրա համար, նրանք բոլորը
իրենց հայացքները և սրտերը
ուղղում են իրենց Տիրոջը,
պատվելի Ջաբբայի, **Ալլահի Տան
ուղղությամբ**: Աղոթքը
իրազործվում է լավագույն
կերպով, որտեղ Արարիչը
պատվիրում է Իր արարածին
երկրպագել Նրան. Ջանի որ այն
ներառում է Տիրոջ
փառաբանությունը մարմնի բոլոր
մասերի մասնակցությամբ, լեզվի
արտաքիրած խոսքով, ձեռքերի

արարքներով, ոսքերով, զիխով,
զգացմունքներով և մարմնի բոլոր
մասերով, որտեղ յուրաքանչյուր
մաս ունի իր երկրպագության
մասնաբաժինը:

Այս զգայարանները և
վերջույթները, ինչպես նաև սիրտը
ունենում են իրենց
մասնաբաժինը: Աղոթքը
բաղկացած է Ալլահի
փառաբանությունից,
մեծարումից: Այն նաև բաղկացած
է ճշմարտության վկայությունից,
Ղուրանի ընթերցումից և Տիրոջ
խոնարհումից, այն Տիրոջ, Ով
կառավարում է անհատին, **ով էլ**
խնդրում է Նրան
նվիրվածությամբ: Այնուհետ

անհատը իսնարհվում է, կռանում
և այնուհետ նստում է, բոլոր
գործողությունները կատարում է
հնազանդությամբ, **ցույց** տալով
իր անօգնականությունը Նրա
մեծության և հզորության առջև։
Այդ ստրուկի սիրտը կոտրվում է,
մամինը դառնում հնազանդ և
բոլոր վերջույթները
հնազանդությամբ ենթարկվում են
Տիրոջը։ Այնուհետ անհատը
աղոթքը ավարտում է Ալլահի
գովաբանությամբ և
փառաբանությամբ և Մարզարե
Մուհամմեդի (**Խ.Ա.Ո.Ն**)
խաղաղության մաղթանքով,
ինչպես նաև այս և **Հետազա**
աշխարհների բարիքի
խնդրանքով։[228]

ԵՐՐՈՐԴ: ԶԱՔՅՅԱԾ [229]

Զաքյաթ— պարտադիր
բարեգործություն- **այն**
հանդիսանում է Իսլամի այունը:
Հարուստ մահմեդականները
պետք է Զաքյաթ վճարի իր իսկ
ունեցվածքից: Այն իր ունեցվածքի
միայն մի փոքր բաժինն է, որը նա
տալիս է աղքատ և կարիքավոր և
այն մարդկանց, **ովքեր ունեն դրա**
կարիքը:

Մահմեդականը պետք է կամովի
վճարի Զաքյաթը: Նա չպետք է
հիշեցնի կամ վնասի նրան, **ում**
տալիս է այդ բարեգործությունը:
Դա պետք է իրականացվի հանուն
Ալլահի, **ոչ թե հանուն որևէ մեկի:**

Նա պետք է վճարի հանուն
Ալլահի, ոչ թե ցուցադության կամ
փառքի համար:

Չարջաթի վճարումը
առաջնորդում է աղքատի կամ
կարիքավորի հոգու օրինության և
բարության: Այն կանխում է
մուրացկանությունը,
հանդիսանում է կարեկցանք և
պաշտպանությունը ընդդեմ
անփութության և աղքատության,
որոնք կարող եին ազդեցություն
թողնել նրանց, վրա, **եթե այն**
մնար ունենո՞ի մոտ: Պատեհ
պահի Չարջաթը առաքինության,
վեհանձնության, այլասիրության,
կարեկցանքի և մարդասիրության
նշան է: Նաև այն նշանակում է

ազատվել գծուծությունից,
ազահությունից և անարժեք
մարդկանցից: Չաքյաթի շնորհիվ
մահմեդականները աջակցում են
միմյանց, ունենորը ցույց է տալիս
իր գթասրտությունը աղքատին, -
այնպես, որ այն վերանա
համայնքի միջից – եթե պատշաճ
իրականցավի – աղքատ
կարիքավորը, ճնշված
պարտապանը կամ
ճանապարհորդը, **ով չունի**
առավել դրույթներ:

Զորբորդ. Պահք

Այն նշանակում է պահք պահել
Ռամադան ամսվա ընթացքում
արևածագից մինչ մայրամուտ:

Պահք պահող անհատը զերծ է
մնում ըմպելիքից, սննդից,
սեռական հարաբերություններից
և նմանատիալ հաճույքներից,
ինչպես Ալլահի երկրպագության
գործողություն և սանձում է իր
իսկ հոգին նմանատիալ
ցանկությունները: Ալլահը
պահքից ազատում է տկարին,
ճանապարհորդին, հղի կնոջը,
կերակրող և նորաթուխ մորը: Նա
պատվիրում է յուրաքանչյուրին
իրեն իսկ համապատասխան
կանոնը:

Այս ամսվա ընթացքում
մահմեղականը սանձում է իր իսկ
ցանկությունները, իսկ
երկրպագության նմանատիալ

գործողությունընդհանուր հոգուց դուքս
 է մղում կենդանական բնագդը
 դեպի այն աշխարհ, որը
 համապատասխանում է
**հրեշտակներին, ովքեր մոտ են
 Ալլահին:** Պահքի իրավիճակը
 մահմեդականին հասցնում է մի
 այնպիսի աստիճանի, ըստ որի նա
 կարծում է, թե այլևս ոչնչի կարիք
 չունի, քացի հասնելուց Ալլահի
 հաճույքին:

**Պահքը ոգեշնչում է, ստիպում է
 հրաժարվել աշխարհից,
 խրախուսում է փնտրել Ալլահի
 բարիքը և ունենորին հիշեցնում է
 աղքատի և նրանց դրության
 մասին, այնպես, որ իրենց սրտերը
 կարեկցեն նրանց և գիտակցեն, որ**

ապրում են Ալլահի շնորհով և
ուստի, պետք է ավելացնեն իրենց
երախտազիտությունը:

Պահը մաքրում է հոգին և
Ալլահի հանդեպ վախ ներշնչում:
Այն ստիպում է անհատին և
հասարակությանը զգալ Ալլահի
կառավարումը իր երջանկության
և դժվարության պահերին, լինի
հրապարակայնորեն, թե զաղտնի,
որտեղ հասարակությունը
ամբողջ ամիսը անց է կացնում
երկրպագության այս
գործողությամբ և իրենց Տիրոջ
գիտակցությամբ: Դրդվելով
Ամենաբարձրյալ Ալլահի հանդեպ
ունեցած վախով և այն
հավատքով, որ Ալլահը տեղյակ է

զաղտնիքին և որ անհատը
անշուշտ մեկ օր պետք է կանգնի
Նրա առջև, [որտեղ Նա կհարցնի](#)
[բոլոր մեծ և փոքր արարքների](#)
[մասին:](#)[\[230\]](#)

ՀԻՆԳԵՐՈՌԴ. ՀԱԶ[\[231\]](#)

Ուխտագնացություն դեպի
Մեքքա, Ալլահի Տուն,
հանդիսանում է յուրաքանչյուր
մահմեդականի պարտք, ով
արդեն չափահաս, գիտակից և
ունակ է և ով ունի, կամ կարող է
թույլատրել վարձել տրանսպորտի
միջոցներ դեպի Մեքքա և այն
ամենը, ինչ անհրաժեշտ է
ճանապարհորդության
ընթացքում ապրելու համար,

պայմանով, որ նրա պարենը չի
գործում ի վեհաստի
պատասխանատվության տակ
գտնվողների: Նաև նա պետք է
համոզված լինի, որ ճանապարհի,
ինչպես նաև իր
պատասխանատվության տակ
գտնվողների ապահովությանը:
Ուխտագնացությունը
պարտադիր հանգամանք է
մահմեդականի կյանքի
ընթացքում, եթե ներում են
հնարավորությունները:

Ուխտագնացությունից առաջ
անհրաժեշտ է ապաշխարհել,
որպեսզի հոգին ձերբազատվի
մեղքերից: Մերքա և այլ սուրբ
վայրեր հասնելուն պես

անհրաժեշտ է սկսել
ուխտագնացության ծեսերը,
որպես Ալլահի երկրպագության և
փառաբանության գործողություն։
Անհրաժեշտ է տեղյակ լինել, որ
չպետք է երկրպագել Քաքքան
կամ այլ սուրբ վայրերը, **քանի որ**
դրանք չեն կարող օգնել կամ
վնասել։ Անհրաժեշտ է տեղյակ
լինել, որ եթե չլիներ Ալլահի
պատվիրանը ուխտի գնալ այդ
տուն, **ապա թույլատրելի չէր լինի**
մահմեղականի համար։

Ուխտագնացության ընթացքում
անհրաժեշտ է կրել երկու ճերմակ
կտոր։ Աշխարհի բոլոր ծայրերից
մահմեղականները հավաքվում են
մեկ վայրում, **կրելով մեկ հանդերձ**

և Երկրպագում Մեկ Աստծու:
Այնտեղ գոյություն չունի որևէ
տարբերություն դեկավարի կամ
ծառայողի, հարուստի և աղքատի,
սպիտակի և սևի միջև: Բոլորը
հանդիսանում են Ալլահի
արարածները և ստրուկները: Ոչ
մի մահմեդական գերադասելի չէ
մյուսից, **գերադասելի են միայն**
նրանց բարեպաշտությունը և
արարքները:

Ուխտագնացության միջոցով
մահմեդականները հասնում են
համագործակցության և
ընդհանուր ճանաչման, նրանք
հիշում են այն Օրը, երբ Ալլահը
հարություն կտա նրանց և
կհավաքի մեկ ընդհանուր վայրում

հաշվի համար, այսպես նրանք
պատրաստվում են մահից հետո
սպասվելիք գործողություններին,
հնազանդվելով Ալլահին:

ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆԸ ԻՍԼԱՄՈՒՄ[232]

Այն նշանակում է երկրպագել
Ալլահին իրականում և մտովի:
Ալլահը հանդիսանում է Արարիչը,
իսկ դուք արարածը, դուք ստրուկ
եք, իսկ Նա Եզակին, **ում պետք է
երկրպագել:** Նման պարագայում
անհրաժեշտ է այս կյանքում
հետևել Ալլահի Շշմարիտ
Ուղղուն և հետևել Նրա Օրենքին
և Մարզարեների ուղղուն: Ալլահը
այնպիսի օրենքներ է պատվիրել

Իր ստրուկներին, ինչպիսիք են
Նրա Եզակիությունը,
աղոթքները, Զարյաթը, **պահը** և
ուխտագնացությունը:

Ամեն դեպքում, վերոհիշյալ
գործողությունները չեն
հանդիսանում Իսլամի
երկրպագության
գործողությունները:

Երկրպագությունը առավել
համապարփակ է: Այն
հանդիսանում է այն, ինչ Ալլահը
սիրում է, **Նա գոհանում է**
ակնհայտ և թաքնված
արարքներով և խոսքերով:

Այսպիսով յուրաքանչյուր գործ
կամ խոսք որը հաճելի է Ալլահին,
հանդիսանում է երկրպագություն:

Նույնիսկ յուրաքանչյուր բարի
սովորություն, որը մտադիր է
գոհացնել Ալլահին, **հանդիսանում**
է երկրպագություն: Զեր լավ
հարաբերությունները հոր,
ընտանիքի, կնոջ, զավակների և
հարևանների հետ, եթե դուք
փնտրում եք Ալլահի
գոհունակությունը, **հանդիսանում**
է երկրպագություն: Զեր բարի
վերաբերմունքը տանը,
աշխատանքի վայրում, շուկայում,
որոնք կատարվում են հանուն
Ալլահի, **հանդիսանում են**
երկրպագություն: Վստահություն
ձեռք բերելը, արդար լինելը,
մյուսներին վնասից
պաշտպանելը, տկարին
աջակցելը, օրինական

ճանապարհով վաստակելը,
ընտանիքի և զավակներին
ապահովելը, աղքատին
աջակցելը, հիվանդի
այցելությունը, քաղցածին
կերակրելը և օժանդակելը, որոնք
կատարվում են հանուն Ալլահի,
հանդիսանում են
Երկրպագության
գործողություններ: Այսպիսով,
բոլոր արարքները, որոնք
կատարվում են կամ ձեր, կամ
ընտանիքի, հասարակության կամ
երկրի համար և որտեղ կարելի է
շահել Ալլահի
հաճոյախոսությունը,
հանդիսանում են
Երկրպագության
գործողություններ:

Նույնիսկ քարի նպատակով
անձնական պահանջի
բավարարումը, **հանդիսանում է**
Երկրպագություն: Ալլահի
Մարզարեն (**Խ.Ա.Ռ.Ն**) ասաց.
"Նույնիսկ, եթե որևէ մեկը
բավարարում է իր սեռական
ցանկությունը, **նա կատարում է**
բարեգործություն:"

Ուղեկցորդները ասացին. "Օվ
Ալլահի Մարզարե, արդյո՞ք որևէ
մեկը, ով հազուրդ է տալիս իր
կրքին, **ստանում է պարզե:**"

Նա պատասխանեց. "Ասացեք
ինձ, եթե նա գործի
անթույլատրելի կերպով, **արդյո՞ք**
նա չի ստանա իր պատիժը:

Նմանապես, եթե նա գործի
թույլատրելի կերպով, **նա**
կստանա պարզեց:"[233]

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) նաև
ասաց. "Յուրաքանչյուր
մահմեդական պետք է
բարեգործություն տա:"

Նրան հարցրեցին. "Ի՞նչ կլինի, եթե
նա ոչինչ չունենա
բարեգործության համար:"

Նա ասաց. "Նա գործում է իր
երկու ձեռքերով և օգնում է իրեն
այդպես և այնուհետ
բարեգործություն տալիս:"

Նրան կրկին հարցրեցին, "Իսկ
եթե նա ի վիճակի չէ:"

Նա պատասխանեց. "Նա պետք է
աջակցի կարիքավորին:"

Նրան կրկին հարցրեցին. "Իսկ
եթե նա ի վիճակի չէ:"

Նա պատասխանեց. "Նա բարիք է
պատվիրում:"

Եվ նրան կրկին հարցրեցին. "Այդ
դեպքում, ի՞նչ կլինի, եթե նա դա է
ի վիճակի չէ:"

Նա պատասխանեց. "Նա
կանխում է չարիքը, քանի որ այն
նրա համար բարեգործական
գործողություն է:[234]

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԸ[235]

Հավատքը և վեց սյուներից են
Հավատք Ալլահին, Նրա
հրեշտակներին, Նրա Գրքերին,
Նրա Մրագարեներին, **հավատք**
Վերջին Օրվան և հավատք
նախախնամությանը:

ԱՌԱՋԻՆ. ՀԱՎԱՏՔ ԱԼԼԱՀԻՆ

Դուք պետք է հավատք ընծայեք
Նրա Տերությանը, որ Նա
հանդիսանում է Տերը, Արարիչը,
ամենի Կառավարիչը: Դուք պետք
է նաև հավատք ընծայեք
երկրպագության Նրա
իրավունքին, Նա միակ Շշմարիտ
Աստված լինելուն, **և որ մնացած**
բոլոր աստվածները կեղծ են:
Դուք պետք է հավատք ընծայեք

Նրա Անուններին և
Ածականներին, որ Նա ունի
Գեղեցիկ Անուններ և կատարյալ
Վսեմ Հատկություններ:

Անհրաժեշտ է հավատք ընծայել,
որ Նա Եզակի է այդ ամենի մեջ:
Նա չունի ոչ մի գործընկեր Իր
Տերության մեջ, ոչ էլ իրավունք
երկրպագելու Իր անուններով և
Ածականներով: Նա ասաց.

رَبُّ السَّمَاوَاتِ وَالْأَرْضِ وَمَا بَيْنُهُمَا فَاعْبُدْهُ
وَاصْطَبِرْ لِعِبَادَتِهِ هَلْ نَعْلَمُ لَهُ سَمِيَّاً

"Երկինքների և երկրի Տերը և
ամենը, ինչ դրանց միջև է,
այսպիսով երկրպագեք Միայն
Նրան և եղեք հաստատուն և
համբերատար Նրա

Երկրպագության մեջ: Արդյո՞ք
դուք ճանաչում եք որևէ մեկին, ով
նման է Նրան: Իհարկե, ոչ ոք
հավասար կամ համեմատելի չէ
Նրան և Նա չունի ոչ մի
զործընկեր Իր հետ: Գոյություն
չունի որևէ բան Նրա նման և Նա
Ամեն ինչ լսում և Ամեն ինչ
տեսնում է:"[236]"

Դուք պետք է նաև հավատք
ընծայեք, ոք Նա ոչ ննջում, ոչ էլ
քնում, **Նա տեղյակ է ամեն**
ակնհայտի և թաքնվածի մասին և
Նրան է պատկանում երկինքների
և երկրի գերազույնինելը: Նա
ասաց.

وَعِنْهُ مَفَاتِحُ الْغَيْبِ لَا يَعْلَمُهَا إِلَّا هُوَ وَيَعْلَمُ مَا فِي
الْبَرِّ وَالْبَحْرِ وَمَا تَسْقُطُ مِنْ وَرَقَةٍ إِلَّا يَعْلَمُهَا وَلَا
حَبَّةٌ فِي ظُلُمَاتِ الْأَرْضِ وَلَا رَطْبٌ وَلَا يَابِسٌ إِلَّا
فِي كِتَابٍ مُّبِينٍ

"Եվ Նրա հետ են Ղայրի
թաքնվածի բանալիները, ոչ ոք
տեղյակ չէ դրանց մասին, **բացի**
Նրանից: Եվ Նա տեղյակ է այն
ամենի մասին, ինչ երկրի և ծովի
վրա է, **ոչ մի տերև չի ընկնում**
առանց նրա գիտության: Երկրի
խավարի մեջ ամեն մի հատիկ
լինի թարմ, թե չոր, **գրառվել է**
Ակնհայտ Արձանագրության
մեջ:"[237]

Դուք նաև պետք է հավատք
ընծայեք, ոք Նա,

Ամենաբարձրյալը, առավել բարձր
կանգնած է Իր Գահին, Իր
արարածներից վեր և որ Նա
նրանց հետ է Իր գիտությամբ և
տեղյակ է նրանց դրության
մասին, լսում է նրանց
խնդրանքները, **տեսնում** նրանց
վայրեղ և կառավարում նրանց
գործերը: Նա մատակարարում է
աղքատին, հանգստություն է
պարզեցնում մերժվածին,
իշխանություն նրան, ում Նա է
ցանկանում, հեռացնում այն,
ումից ցանկանում է և Նա ի
վիճակի է անել ամեն բան:[238]

Ալլահի հավատքը
հնարավորություն է տալիս
հանգել հետևյալին.

1. Այն հնարավորություն է տալիս
սիրել Ալլահին և փառաբանել
Նրան և ուստի հետևել Նրա
հրամաններին և խուսափել այն
ամենից, **ինչ նա արգելել է:**

Իրազործելու դեպքում անհատը
հասնում է այս և Հաջորդ
աշխարհների կատարյալ
երջանկությանը:

2. Ալլահի հավատքը անհատին
դարձնում է արժանապատիվ և
ինքնաբավ, քանի որ այդ միջոցով
նա գիտակցում է, որ միայն
Ալլահն է հանդիսանում Ճշմարիտ
Մատակարարը այն ամենի, ինչը
գտնվում է այս տիեզերքում, **որ**
բացի Նրանից ոչ ոք չի կարող
վնասել կամ օգուտ տալ: Այս իսկ

զիտակցությունը ազատում է ցանկացած մտքից, որ գոյություն ունի որևէ այլ բան, բացի Ալլահից և նրա սրտից հեռացնում է վախը, նա հույսը դնում է միայն Ալլահին և վախենում է միայն Նրանից:

3.Ալլահի հավատքը
հնազանդեցնում է սիրտը, քանի
որ անհատը զիտակցում է, **որ**
ամենի բարիք Ալլահից է:
Սատանան չի կարող խարել
նրան: Նաև նա չի դառնում
ամբարտավան կամ պարծենկոտ
իր ունեցվածքով և
իշխանությամբ:

4.Հավատացյալը կարող է
որոշակի զիտելիք ունենալ այն

մասին, որ հնարավոր չէ հասնել
հաջողության և քավության,
առանց Ալլահին հաճո քարի
գործերի: Ամեն դեպքում ոմանք
ունեն թյուր հավատք, որ Ալլահը
պատվիրել է խաչել իր որդուն,
որպես մարդկության մեղքերի
քավություն, ոմանք է հավատք են
ընծայում կեղծ աստվածների,
կարծելով, որ ամեն ինչ կլինի
իրենց ցանկությամբ, սակայն այդ
ոչինչ չի բերի նրանց, իսկ
մյուսները աթեիստ են, **ովքեր**
բոլորովին հավատք չեն ընծայում
Արարչին: Այս հավատքները
ուղղակի ցանկալի մտքեր են,
քանի որ, եթք նմանատիպ մարդիկ
Հարության օրը հանդիպեն
Ալլահին և տեսնեն

իրականությունը, նրանք
կզհտակցեն, [որ սխալվել են:](#)

5. Ալլահի հավատքը անհատին
տալիս է վճռականության ուժ,
արիություն,
հաստատակամություն,
ամրություն և վստահություն
Ալլահին, [Նրան հաճո արարքների
խնդրի դժվարությունների մեջ:](#)
[Նա կատարյալ](#)
համոզվածությամբ հավատք
ընծայում երկինքների և երկրի
Արարչին և որ [Նա օգնում և
աջակցում է նրան:](#) Ուստի նա
դառնում է լեռան պես
հաստատուն իր համբերության,
[հաստատակամության և Ալլահի
վստահության մեջ:](#) [239]

ԵՐԿՐՈՐԴ. ՀԱՎԱՏՔ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻՆ

Մահմեդականը պետք է հավատք ընծայի հրեշտակներինև համոզված լինի, որ Ալլահը արարել և նկարագրել է նրանց.

وَقَالُوا اتَّخَذَ الرَّحْمَنُ وَلَدًا سُبْحَانَهُ بَلْ عِبَادُ
مُكْرَمُونَ * لَا يَسْبِقُونَهُ بِالْقَوْلِ وَهُمْ بِأَمْرِهِ يَعْمَلُونَ
* يَعْلَمُ مَا بَيْنَ أَيْدِيهِمْ وَمَا خَلْفَهُمْ وَلَا يَشْفَعُونَ إِلَّا
لِمَنِ ارْتَضَى وَهُمْ مِنْ خَشِيتِهِ مُشْفِقُونَ

"Նրանք, (այսինքն նրանք կոչում են Ալլահի զավակներ, այսինքն հրեշտակներ, 'Իսան, (Հիսուսը) Մարիամի որդին, Ուզայրը, (Իզրան) հանդիսանում են պատվելի ստրուկներ: Նրանք չեն խոսում, մինչ Նա չի խոսում և

Նրանք գործում են ըստ Նրա հրամանի: Նա տեղյակ է, թե ինչ է նրանց առջև և ինչ նրանց ետևում և նրանք չեն կարող միջնորդել նրան, **ով զնուցնում է Նրան:** Եվ նրանք վախով կանգնում են Նրա ահից:**"[240]**

Հրեշտակների մեկ այլ
նկարագրության մեջ Ալլահն
ասաց.

* لَا يَسْتَكِبُرُونَ عَنْ عِبَادَتِهِ وَلَا يَسْتَخْسِرُونَ
يُسْتِحْوِنَ اللَّيْلَ وَالنَّهَارَ لَا يَفْتَرُونَ

"Նրանք (այսինքն հրեշտակները)
բավական ամբարտավան չեն
երկրպագել Նրան, ոչ Էլ տեղյակ են
(Նրա երկրպագության)
հոգնածությանը: Նրանք (այսինքն

հրեշտակները) գիշեր և ցերեկ
փառաբանում են Նրա Փառքը (և)
նրանք երբեք չեն թուլանում (անել
դա):"[\[241\]](#)

Ալլահը թաքցնում է նրանց
մարդկային աչքից, այնպես, [որ](#)
[մենք չենք կարող տեսնել նրանց:](#)
Սակայն երբեմն Ալլահը ցույց է
տալիս նրանց Իր մի քանի
Առաքյալներին և
Մարզարեներին:

Հրեշտակները ունեն իրենց
վերապահած
գործողությունները:Գաբրիելին
վերապահվել է
Հայտնությունները, որոնք նա
Ալլահից բերում էայն

**Մարզարեներին, ում Նա է
ցանկանում:** Նրանց մեջ են նաև
հոգիները վերցնող հրեշտակը,
ինչպես նաև հրեշտակները, ում
վերապահվել է արզանդի
պտուղները, նրանց մեջ են նաև
նրանք, ում վերագրել են
պաշտպանել մարդկությանը,
ինչպես նաև նրանք, **ում վերագրել**
**են արձանագրել իրենց
արարքները:** Յուրաքանչյուրը
ունի երկու հրեշտակ, "մեկը աջ,
իսկ մյուսը ձախ կողմում,
որպեսզի նշեն արարքները: Ωչ մի
արտաքերած խոսք չի մնա
աննկատ, **բոլորը պատրաստ են
արձանագրության:**"[242]

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ՀԱՎԱՏՔԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆԵՐԸ

1. Այն մաքրում է մահմեղականի հավատքը հեթանոսության հետքերից, քանի որ, եթք մահմեղականը հավատք է ընծայում հրեշտակների գոյությանը, ում Ալլահը վերագրել է այս մեծ գործողությունները, զերծ է մնում երևակայական արարածների հավատքի գոյությունից, որոնք ըստ ոմանց, դերակատարություն ունեն սիեզերքի գործերին:

2. Այն մահմեղականին հնարավորություն է տալիս գիտակցել, որ հրեշտակները ոչ

վնասում, ոչ էլ օգուտ են տալիս,
սակայն նրանք պատվելի
ստրուկներ են, ովքեր
հնազանդվում են Ալլահին, **Եթք**
Նա պատվիրում է նրանց: Նա
չպետք է նրանց երկրպագի, ուղղի
իր խնդիրները, **կամ կախված**
լինի:

ԵՐԵՌՈԴ. <ԱՎԱՏՔ ԳՐՋԵՐԻՆ

Հավատք ընծայել, որ Ալլահը Իր
Գրքերը հայտնել է Առաքյալներին
և Մարգարեներին, **որպեսզի**
բացատրի ճշմարտությունը և
կոչի: Ալլահն ասաց.

لَقَدْ أَرْسَلْنَا رُسُلًا بِالْبَيِّنَاتِ وَأَنْزَلْنَا مَعَهُمُ الْكِتَابَ
وَالْمِيزَانَ لِيَقُومَ النَّاسُ بِالْقِسْطِ وَأَنْزَلْنَا الْحَدِيدَ فِيهِ

بَأْسٌ شَدِيدٌ وَمَنَافِعُ لِلنَّاسِ وَلِيَعْلَمَ اللَّهُ مَنْ يَنْصُرُهُ
وَرُسُلُهُ بِالْغَيْبِ إِنَّ اللَّهَ قَوِيٌّ عَزِيزٌ

"Իրոք, Մենք ուղարկել ենք Մեր
Մարզարեներին ակնհայտ
ապացույցներով և հայտնել
նրանց հետ Գիր և
Հավասարակշռություն
(արդարություն), [որպեսզի](#)
մարդկությունը ի վիճակի լինի
պահպանել
արդարությունը:[\[243\]](#)

Գրքերը բազմաթիվ են: Դրանց
թվից են Մարզարե Իբրահիմի
Գիրը, Մարզարե Մովսեսի
Թորան, Մարզարե Դավիթի
Սաղմոսները և Հիսուս Քրիստոսի

Ավետարանը, թող խաղաղություն լինի նրանց բոլորին:

Նախորդ Գրքերի հավատքը
հիմնված է այն հավատքի վրա, որ
Ալլահը հայտնել է նրանց Իր
Մարգարեներին և որ այդ գրքերը
ներառում են Օրենքը, որը Ալլահը
ցանկանում էր տարածել այդ
ժամանակաշրջանի մարդկանց:

Ալլահի այս բոլոր Գրքերը մեզ
տեղեկացնում են, որ բոլորը
մարել են: Աքրահամի գիրը այլևս
գոյություն չունի: Ինչ վերաբերում
է Թորային, Ավետարանին և
Սահմոսներին, նույնիսկ, եթե
դրանք գոյություն ունեն
Հրեաների և Քրիստոնյաների

ձեռքում, աղավաղվել, աղտոտվել
են, **իսկ բնօրինակ**
բովանդակությունները կորել:
Հատվածները, որոնք չեն
պատկանում այդ գրքերին, **առկա**
են այնտեղ: Ինչ վերաբերում է
հեղինակներին, **ապա նրանք**
բոլորովին այլ մարդիկ են:
Օրինակ Հին Կտակարանը ունի
ավելի քան քառասուն գիրք և
միայն հինգը վերագրում են
Մովսեսին: Իսկ մերօրյա
ավետարանների ոչ մի հատված չի
վերաբերում Հիսուսին: Ալլահի
վերջին գիրքը Ղուրանն է, **որը**
հայտնվել է Մարգարե
Մուհամմեդին: Ալլահը միշտ
պահպանել և ներկայացրել է այն:

Ոչ մի տառ, իսուր, ճայն կամ
իմաստ չի աղավաղվել:

Ղուրանը տարբերվում է մյուս
նախորդ Գրքերից:

1. Նախորդ Գրքեր կորել,
փոփոխվել են, **իսկ**
ընդմիջարկությունները սողոսկել:
Դրանք վերագրել են նրանց,
ովքեր չեն հանդիսանում
ճշմարիտ հեղինակները: Այնտեղ
են ավելացրել բազմաթիվ
մեկնաբանություններ և
չափազանցություններ և
բազմաթիվ այլ բաներ, որոնք
հակասում են Աստվածային
Հայտնությանը, բնույթին և
բանականությանը: Ալլահը

պաշտպանել է Ղուրանը,
տառերը, խոսքերը այնպես,
ինչպես Նա հայտնել է
Մոլհամմեդին: Ոչ մի
փոփոխություն կամ լրացում չի
սողուկել այնտեղ, **քանի որ**
Մահմեդականները ցանկացել են
Ղուրանը զերծ պահել բոլոր
արատներից: Նրանք չեն խառնել
այն Մարգարեի կյանքի կամ
ուղեկցորդների
պատմություններով, ինչպես նաև
Ղուրանական
մեկնաբանություններով և
կանոններով, որոնք կապված են
երկրպագության և մարդկային
հարաբերությունների հետ:

2. Այսօր, զոյություն չունի
հնագույն գրքերի ոչ մի հայտնի
պատմական հեղինակություն:
Նույնիսկ, ոչինչ հայտնի չէ լեզվի
կամ մարդկանց մասին: Որոշ
գրքեր վերագրել են նրանց, ովքեր
հեղինակները չեն:

Ինչ վերաբերվում է Ղուրանին,
ապա մահմեդականները այն
ստացել են Մուհամմեդից
(Խ.Ա.Ռ.Ը) հաջող, քանակոր և
զրակոր կերպով: Եվ
յուրաքանչյուր
ժամանակաշրջանում կամ
երկրում զոյություն ունեն
հազարավոր Մահմեդականներ,
ովքեր այս Գիոքը անզիր գիտեն,
քանի որ զոյություն ունեն

հազարավոր կրկնօրինակներ:

Եթե քանավոր կրկնօրինակները
համապատասխան չլինեն գրավոր
կրկնօրինակներին, ապա չեն
ճանաչվի տարամետները, քանի
որ այն ինչ գոյություն ունի
մարդկանց հիշողության մեջ,
ալետք է միշտ համաձայնեցվի
գրավոր կրկնօրինակների հետ:

Նախ և առաջ, Ղուրանը
փոխանցել են քանավոր այնպես,
որ աշխարհի ոչ մի գիրք չի վայելել
դա: Նույնիսկ փոխանցման այս
հատուկ հնարավոր է գտնել միայն
մահմեդականների մոտ: Ղուրանի
ներկայացման
մեթոդաբանությունը հետևյալն է.
Աշակերտը ուսուցչից անգիր

սովորում է Ղուրանը, **ով է իր
հերթին սովորել է իր ուսուցչից:**
Ուսուցիչը աշակերտին տալիս է
վկայագիր "Չազահ" անվանումով,
որտեղ վկայում է, որ ուսուցանել է
իր աշակերտին այն, ինչը նա
ուսուցանել է իր ուսուցչից,
յուրաքանչյուրը այս
ուսուցիչներից կկոչեն իրենց
ուսուցչին, ումից հաջողությամբ
ուսուցանել են Ղուրանը, **մինչ**
անվանումների այդ շղթան
կհասնի **Ալլահի մարգարե**
Մուհամմեդին: Ահա այսպես,
բանավոր հաջողությամբ,
ուսուցիչների շղթան հասնում է
մինչ **Ալլահի Մարգարեն**
(Խ.Ա.Ո.Ն):

Գոյություն ունեն բազմաթիվ
հստակ վկայություններ և
պատմական ապացույցներ,
որոնք կապված են փոխանցող
մարդկանց շղթային,
յուրաքանչյուր սուրայի և
Ղուրանի յուրաքանչյուր
տարբերակի գիտության հետ,
ինչը կապված է թե որտեղ և երբ է
այն հայտնվել Մուհամմեդին:

3. **Նախորդ Գրքերի լեզուները**
վաղուց արդեն մարել են: Այսօր ոչ
ոք չի խոսում այդ լեզուներով և
շատ քերը կարող են հասկանալ:
Ինչ վերաբերվում է Ղուրանի
հայտնված լեզվին, ապա այն
կենդանի լեզու է, **որով այսօր**
խոսում են հարյուրավոր միլիոն

մարդիկ: Դրանով խոսում և
ուսուցանում են աշխարհի
յուրաքանչյուր երկրում: Նույնիսկ,
նա, ով չի ուսուցանում այն,
ամենուր կարող է գտնել նրանց,
ովքեր կարող են ուսուցանել
Ղուրանի իմաստը:

4. Նախորդ յուրաքանչյուր Գիրք
հայտնվել է որոշակի
ժամանակաշրջանում և որոշակի
ժողովրդին, այդ իսկ պատճառով
այն ուներ կանոններ, որոնք
բնորոշ էին այդ
ժամանակաշրջանի, **այդ**
ժողովրդին: Նմանատիպ
բնորոշմամբ ցանկացած գիրք, **չի**
համապատասխանում
մարդկությանը:

Ինչ վերաբերում է Մեծ Ղուրանին,
ապա այն մի Գիրք է, [որը](#)
[նախատեսված](#) է բոլոր
ժամանակաշրջանների և վայրերի
համար: Այն ընդգրկում է
պատմիրաններ և կանոններ, թե
ինչպես պետք է մարդիկ
վերաբերվեն միմյանց, որը
համապատասխանում է
յուրաքանչյուր տարիքին, [քանի](#) որ
այն դիմում է ամբող
մարդկությանը:

Վերը նշվածից պարզ է դառնում,
որ անհնար է մարդկության դեմ
ուղղված Ալլահի ապացույցը լինի
գրքերի մեջ, որի բնօրինակները
աղավաղումից հետո այլսս
գոյություն չունեն և որի լեզուները

այսօր ոչ ոք չի կիրառում: Իր
արարածի դեմ ուղղված Ալլահի
ապացույցը պետք է լինի Գրքի
մեջ, որը պաշտպանված է
լրացումներից, **արատից կամ
աղավաղումից:** Կրկնօրինակները
պետք է տարածեին
յուրաքանչյուր վայրում և գրվեին
կենդանի լեզվով, որով ընթերցում
էին միլիոնավոր մարդիկ, **ովքեր
կարող էին Ալլահի Ուղերձը
տարածել ամբողջ մարդկությանը:**
Այս Գիրքը հանդիսանում է
Փառահեղ Ղուրանը, որը Ալլահը
հայտնել է Մուհամմեդին
(Խ.Ա.Ո.Ն), որը մինչ
ընդմիջարկությունը, նախորդ
Գրքերի վկայությունը և
հաստատումն է: Այն մի Գիրք է,

որին պետք է հետևի ամբողջ
մարդկությունը, այնպես, որ այն
լինի լույս, դարման,
ուղղորդություն և
գթասրտություն: Ալլահն ասաց.

وَهَذَا كِتَابٌ أَنزَلْنَاهُ مُبَارَكٌ فَاتِّبِعُوهُ وَاتَّقُوا لَعْنَكُمْ
تُرْحَمُونَ

"Եվ սա է օրինյալ Գիրքը,
(Ղուրանը), որը Մենք ուղարկել
ենք, այնպես որ հետևեք դրան և
վախեցեք Ալլահից (այսինքն, մի
արհամարհեք Նրա Հրամանները),
որպեսզի դուք գթասրտություն
ստանաք (այսինքն փրկվեք
Դժոխքի տանջանքից):"[244]

Նա նաև ասաց.

قُلْ يَا أَيُّهَا النَّاسُ إِنِّي رَسُولُ اللَّهِ إِلَيْكُمْ جَمِيعًا الَّذِي
لَهُ مُلْكُ السَّمَاوَاتِ وَالْأَرْضِ لَا إِلَهَ إِلَّا هُوَ يُخْرِي
وَيُمْسِيْتُ فَامِنُوا بِاللَّهِ وَرَسُولِهِ النَّبِيِّ الْأَمِيِّ الَّذِي
يُؤْمِنُ بِاللَّهِ وَكَلِمَاتِهِ وَاتَّبِعُوهُ لَعَلَّكُمْ تَهْتَدُونَ

""Ասա (օվ Մուհամմեդ Խ.Ա.Ո.Ն)

"Օվ մարդկություն, իրոք, ինձ
ուղարկել են ձեզ բոլորիդ, [որպես](#)
[Ալլահի Մարգարե:](#)" [\[245\]](#)

ԶՈՐՌՈՐԴ. <ԱՎԱՏՔ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻՆ

Հավատք ընծայել, որ Ալլահը
Մարգարեներ է ուղարկել իր
արարածին, որպեսզի նրան
ավետեն Դրախտի մասին, եթե
նրանք հավատք ընծայեն Ալլահին
և Մարգարեներին և զգուշացնել

պատժի մասին, եթե
չհնազանդվեն: Ալլահն ասաց.

وَلَقَدْ بَعَثْنَا فِي كُلِّ أُمَّةٍ رَسُولاً أَنْ أَعْبُدُوا اللَّهَ
وَاجْتَبَوْا الطَّاغُوتَ فَمِنْهُمْ مَنْ هَدَى اللَّهُ وَمِنْهُمْ مَنْ
حَقَّتْ عَلَيْهِ الضَّلَالَةُ فَسَيِّرُوا فِي الْأَرْضِ فَانظُرُوا
كَيْفَ كَانَ عَاقِبَةُ الْمُكَذِّبِينَ

""Եվ, իրոք, Մենք ուղարկել ենք
յուրաքանչյուր Ումմայից
(համայնքից, ժողովրդից)
Մարգարե, (որպեսզի հայտնեն)
"Երկրպագեք (Միայն) Ալլահին և
խուսափեք (կամ հեռու մնացեք)
Թագութից (բոլոր կեղծ
աստվածություններից և այլն,
այսինքն մի երկրպագեք Թագութ,
երկրպագեք Ալլահին):""[246]

Նա նաև ասաց.

رُسُلًا مُبَشِّرٍ بِنَ وَمُنذِرٍ بِنَ لِئَلَا يَكُونَ لِلنَّاسِ عَلَى^١
اللَّهِ حُجَّةٌ بَعْدَ الرُّسُلِ وَكَانَ اللَّهُ عَزِيزًا حَكِيمًا

"Մարգարեները, ավետիսի
կրողներ են, ինչպես նաև
զգուշացման, որպեսզի
Մարգարեների գալուստից հետո
այդ մարդկությունը չունենա որևէ
արդարացում ընդդեմ
Ալլահի"[\[247\]](#)

Մարգարեները շատ են: Նրանցից
առաջինը Նոյն է, իսկ վերջինը
Սուլհամմեդը: Նրանք շատ են,
ոմանց մասին Ալլահը
պատմություններ է պատմել: Այդ
Մարգարեներից են Աբրահամը,
Մովսեսը, Հիսուսը, Դավիթը,
Հովհաննեսը, Զաքարիան և

Սալեհը: Կան նաև Մարզարեներ,
որոնց մասին Ալլահը ոչինչ չի
ասել.

وَرُسُلًا قَدْ قَصَصْنَا هُمْ عَلَيْكَ مِنْ قَبْلٍ وَرُسُلًا لَمْ
نَفْصُصْنَاهُمْ عَلَيْكَ وَكَلَمَ اللَّهُ مُوسَى تَكَلِّيمًا

"Եվ Մարզարեներ, որոնց մասին
Մենք նշել ենք ձեզ նախկինում և
Մարզարեներ, **որոնց մասին Մենք**
չենք նշել ձեզ:" [\[248\]](#)

Այս բոլոր Մարզարեները մարդիկ
են, **որոնց արարել է Ալլահը:**

Նրանք չունեն Աստվածության
կամ Տերության որևէ հատկանիշ:
Ուստի, ոչ մի երկրպագություն
չպետք է ուղղել նրանց, քանի որ
նրանք չեն կարող պիտանի լինել
նրանց, կամ վնասել, **կամ**

առավելություն տալ: Ալլահն
ասաց Մարգարե Նոյի մասին.

وَلَا أَقُولُ لَكُمْ عِنْدِي خَرَائِنُ اللَّهِ وَلَا أَعْلَمُ الْغَيْبَ
وَلَا أَقُولُ إِنِّي مَلَكٌ وَلَا أَقُولُ لِلَّذِينَ تَزَدَّرِي أَعْيُنُكُمْ
لَنْ يُؤْتِيَهُمُ اللَّهُ خَيْرًا اللَّهُ أَعْلَمُ بِمَا فِي أَنفُسِهِمْ إِنِّي
إِذًا لَمِنَ الظَّالِمِينَ

"Եվ Ես չեմ ասում ձեզ, որ ինձ հետ
Ալլահի Գանձն է, ոչ ի ես տեղյակ
եմ Ղայրից, (անտեսանելիից), ոչ ի
ես ասում եմ, [որ ես հրեշտակ](#)
[եմ:](#)"[\[249\]](#)

Ալլահը Մուհամմեդին (Խ.Ա.Ո.Ն)
պատվիրեց ասել.

قُلْ لَا أَقُولُ لَكُمْ عِنْدِي خَرَائِنُ اللَّهِ وَلَا أَعْلَمُ الْغَيْبَ
وَلَا أَقُولُ لَكُمْ إِنِّي مَلَكٌ إِنْ أَتَّبَعُ إِلَّا مَا يُوحَى إِلَيَّ
قُلْ هَلْ يَسْتَوِي الْأَعْمَى وَالْبَصِيرُ أَفَلَا تَتَفَكَّرُونَ

""**Ասա (օվ Մուհամմեդ Խ.Ա.Ո.Ն)**
"Ես չեմ ասում ձեզ, որ ինձ հետ
Ալլահի զանձերն են, ոչ ի, (**ոք**) ես
տեղյակ եմ անտեսանելիին, ոչ ի
ես ասում եմ ձեզ, **ոք ես հրեշտակ**
եմ:""[250]

Նաև ասել

قُلْ لَا أَمْلِكُ لِنَفْسِي نَفْعًا وَلَا ضَرًّا إِلَّا مَا شَاءَ اللَّهُ
وَلَوْ كُنْتُ أَعْلَمُ الْغَيْبَ لَا سُتَّكْثُرُ مِنَ الْخَيْرِ وَمَا
مَسَّنِيَ السُّوءُ إِنْ أَنَا إِلَّا نَذِيرٌ وَبَشِيرٌ لِقَوْمٍ يُؤْمِنُونَ

""**Ասա (օվ Մուհամմեդ Խ.Ա.Ո.Ն)**
"Ես ինքս չունեմ օգուտ տալու
կամ վնասելու հզորություն,
բացառությամբ Ալլահի կամքի:""
[251]

Ուստի Մարզարեները պատվելի
ստրուկներ են, [ում Ալլահը ընտրել](#)
և պատվել է Ուղերձով և
նկարագրել ինչպես Իր
ստրուկներ: Նրանց կրոնը Իսլամն
է և Ալլահը չի ընդունի մեկ այլ
կրոն: Ալլահն ասաց.

إِنَّ الدِّينَ عِنْدَ اللَّهِ الْإِسْلَامُ وَمَا اخْتَلَفَ الَّذِينَ أَوْثَوا
الْكِتَابَ إِلَّا مِنْ بَعْدِ مَا جَاءَهُمُ الْعِلْمُ بَعْيَادًا بَيْنَهُمْ وَمَنْ
يَكْفُرُ بِآيَاتِ اللَّهِ فَإِنَّ اللَّهَ سَرِيعُ الْحِسَابِ

"Ուստի, [Ալլահի կրոնը](#)
[հանդիսանում է Իսլամը:](#)" [\[252\]](#)

Մարզարեների հիմնական
ուղերձները մեկն են, [իսկ իրենց](#)
[Օրենքները տարբեր:](#) Ալլահն
ասաց.

وَأَنْزَلْنَا إِلَيْكَ الْكِتَابَ بِالْحَقِّ مُصَدِّقًا لِمَا بَيْنَ يَدَيْهِ
مِنَ الْكِتَابِ وَمُهَيْمِنًا عَلَيْهِ فَاحْكُمْ بَيْنَهُمْ بِمَا أَنْزَلَ
اللَّهُ وَلَا تَتَنَزَّلْ أَهْوَاءَهُمْ عَمَّا جَاءَكَ مِنَ الْحَقِّ لِكُلِّ
جَعَلْنَا مِنْكُمْ شِرْعَةً مِنْهَا جَاءَكُمْ وَلَوْ شَاءَ اللَّهُ لَجَعَلَكُمْ
أُمَّةً وَاحِدَةً وَلَكُنْ لِيَلْوَكُمْ فِي مَا آتَكُمْ فَاسْتَبِقُوا
الْخَيْرَاتِ إِلَى اللَّهِ مَرْجِعُكُمْ جَمِيعًا فَيُنَبِّئُكُمْ بِمَا كُنْتُمْ
فِيهِ تَخْلِفُونَ

"Զեզանից յուրաքանչյուրին Մենք
տվել ենք Օրենք և պարզ
ուղղի: "[253]

Այս Օրենքներից վերջինը
պատկանում է Մուհամմեդին: Այն
վերացրել է բոլոր նախորդ
օրենքները: Նրա Ուղերձը
հանդիսանում է վերջին
Աստվածային Ուղերձը, [իսկ](#) նա
վերջին Մարզարեն: Նա, ով

հավատք է ընծայում Առաքյալին,
